

## Կ'ուզեցնայի . . .

---

Կ'ուզեցնայի, երբ կրկին  
 Քամ յոգնաբեկ ուխտաւոր  
 Նըւիրական քո շէմքին, —  
 Տեսնել այնպէս նորից քեզ,  
 Ինչպէս տեսայ, սիրեցի,  
 Սիրեցի քեզ սրտակէզ:

Շընորհներով կուսական,  
 Աչերիդ մէջ նըւիրում,  
 Խոստումներով դիւքական:  
 Ճակատըդ՝ լոյս ու նաճանջ  
 Եւ ժըպիտով հոգեքով  
 Եւ ձայնիդ մէջ սիրոյ կանջ:

Շուրջըդ՝ գարնան բոյր ու ցօղ,  
 Շուրջըդ՝ կարկաջ ու կանանջ,  
 Եւ երազներս ոսկեշող . . .

Վենետիկ, 1925, Թ.

### ԵՐԿՈՒ ՔԱՌԵԱԿ

— Ի՞նչ պիտ' լինիմ մահից յետոյ .  
 Հարցում արի ես Բընութեան:  
 — Ինչ որ էիր կեանքից առաջ,  
 Այսպէս տըւեց ինձ պատասխան:

Տիեզերքն այս անսահման  
 Իր ծանրութեամբ ահագին  
 Կախուած է սոսկ մի մագից . —  
 Եւ այդ մագն է իմ հոգին:

Փարիզ, 1932, Թ.

## ԳԻՐՔ ԾՆՆԴՈՑ

Եւ ըսկզբից ըսկիզբների,  
 Անեղն Աստուած  
 Իրեն տարրից եւ շարժումից  
 Վերաստեղծեց  
 Տարածութիւնն անծայրածիր  
 Եւ ժամանակն յաւերժական՝  
 Թոհ ու բոհի մէջ մըխըրբուն:  
 Եւ յաժում էր հոգին նըրա  
 Խաւարակուռ վիհի վըրայ  
 Թոհ ու բոհի:

«Եւ լինի լոյս», Աստուած ասաց,  
 Եւ իր մտքից հեղեղացաւ  
 Եւ ծաւալուեց լոյսը հըզօր:  
 Եւ այդ եղաւ  
 Արարչութեան օրն առաջին:

Եւ երբ տեսաւ անեղն Աստուած  
 Որ բարի է լոյսը հըզօր՝  
 Մի շիթ առաւ իրեն հոգուց,  
 Փոխադրեց  
 Ովկիանոսի ջըրերի մէջ  
 Եւ ըստեղծեց այնտեղ փոքրիկ  
 Այն էակը խորհրդաւոր,  
 Որն ըմբռնեց լոյսը հըզօր:  
 Եւ այս վըսեմ ու հրաշափառ  
 Ըմբռնումի ակնթարթով  
 Աւարտուեցաւ  
 Օրինակարգ եւ ներդաշնակ  
 Անհուն շէնքը տիեզերքի  
 Անհուն հոգում այս էակի:  
 Եւ այդ եղաւ  
 Արարչութեան օրը վերջին:

ԱԻԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆ

Փարիզ, 1932 թ.